Սարդ Մարդը շատ հոգնած էր: Վերջին շաբաթը գիշերները համարյա չէր քնել: Տագնապալի, անհեթեթ, մի խոսքով՝ սարսափելի երազներ էր տեսնում: Մի շաբաթ շարունակ մղձավանջներից հետո հանցագործների դեմ կպայքարես, բա չե՞ս պայքարի: Բայց Փիթերն առանձնապես այս մասին չէր մտածում, մինչև որ երկա՛ր, սարդավարի հորանջեց ու քիչ մնաց թույլ տար, որ Սարսուռը Ոստիկանների հանդիսությունը խափաներ:

Սարդ Մարդը, քունը գլխին, գործի անցավ. ճիշտ ժամանակին հասցրեց Սարսուռի ձեռնոցները ոստայնել ու չարագործին հատակին գամել: Եվ հասկացավ, որ իր խնդիրն այլևս չի կարելի ականջի հետև գցել: Պետք էր մասնագետի դիմել՝ մեկին, որն իրոք մղձավանջների ու մարդկային գիտակցության գիտակ լիներ: Այդպիսի մի բժշկի ճանաչում էր...



– Բժիշկ Սթրե՛նջ,– հին բարեկամին ողջունեց Փիթերը,– ներիր, որ խանգարում եմ, բայց վերջերս խնդիր ունեմ՝ կապված...

– Քնելու հե՛տ,– բամբ ձայնով գոչեց բժիշկ Սթրենջը և ընկերոջն իր առանձնասենյակը կամ, ինչպես ինքն էր ասում՝ իր «սրբություն սրբոցն» ուղեկցեց:

Իր ոստայնավոր ընկերոջ խնդիրների մասին նրա գալուց շատ առաջ էր կռահել: Ապա ձեռքերը լայն տարածեց՝ Ագամոտոյի կախարդական աչքը ցույց տալով:

– Աչքն ինձ ասել էր, որ ծանր երազներ ես տեսնում,– ասաց Փիթերին:– Հիմա ինձ դրանք ցույց կտա:

Շատ չանցած՝ բժիշկը Սարդ Մարդու երազներն էր զննում: Մի քանիսում Փիթերը երեխա էր ու շալվարը հագնել մոռացած՝ դպրոց էր եկել: Մյուսներում Չարագույժ Վեցյակից անընդմեջ պարտություններ էր կրում:

– Քունդ խանգարվելու պատճառը գերբնական է,– բացատրեց Սթրենջը:– Նենգ Մղձավանջն է գիտակցությունդ ներխուժել:– Ապա մատները ճրթացրեց, Փիթերին հիպնոսեց և Ագամոտոյի աչքի օգնությամբ նրա երազները մտավ:

Գիրքն ամբողջությամբ՝

ՀԱՍՏՂ